ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Լոռու մարզի խորհրդի նիստի

05.03.2024թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին՝

Մարզի խորհրդի անդամները:

Հրավիրված էին՝

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանը և Հ.Ավետիսյանը, մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանը, հրավիրյալները, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարները, ՀԳՄՏԾ ղեկավարները, լրատվության, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2023թ. կատարած աշխատանքների հաշվետվությունը.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետ Արամ Ղազարյան)

2. 2023 թվականի ընթացքում Լոռու մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարման և 2024թ. հունվար-փետրվար ամիսների կատարման ընթացքի մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մերի Դալլաքյան, 10 րոպե)

3. 2023 թվականին քաղաքաշինության բնագավառում սուբվենցիոն և պետական ծրագրերով կատարված աշխատանքների և 2024 թվականին սուբվենցիոն և պետական բյուջեի միջոցներով նախատեսված ծրագրերի ընթացքի մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռուբեն Մարգարյան, 10 րոպե)

4. Այլ հարցեր:

Հայտարարություններ՝

1) ՀՀ Լոռու մարզի դատախազ Ա.Շահբազյան.
2) ՆԳՆ Լոռու մարզային ոստիկանության վարչության պետ Ա.Զաքարյան.
3) ՆԳՆ ՓԾ ԼՄՓՎ պետի տեղակալ Ա. Գրիգորյան.
4) ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ ԼՄՏՍ ղեկավար Ս.Գևորգյան:

ՀՀ Լոռու մարզպետի հաշվետվությունն ընդունվեց ի գիտություն :

Առաջարկվեց.

1) ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

1. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների ապահովման ուղղությամբ.
2. Բացատրական աշխատանքներ իրականացնել համայնքներում ազգաբնակչության շրջանում քրեական ենթամշակույթի ձևավորման բացառման ուղղությամբ, թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխարգելման և ապօրինի զենք-զինամթերքի կամավոր հանձնման և այլ միջոցառումների իրականացման ուղղությամբ.
3. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքներում շչակների ձեռքբերման և տեղադրման, պատսպարման վայրերի բարելավման և վերանորոգման ուղղությամբ.
4. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հրդեհների կանխարգելման և հակահրդեհային միջոցառումների իրականացման ուղղությամբ:

2) ՀՀ Լոռու մարզի անտառտնտեսությունների տնօրեններին և ՀՀ ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝

1. Անհրաժեշտ համատեղ միջոցառումներ իրականացնել ապօրինի անտառահատումների կանխարգելման և դրանց բացահայտման ու մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

05/03/2024

X

ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

Մ Ա Ր Զ Պ Ե Տ՝ Ա.Ղ Ա Զ Ա Ր Յ Ա Ն

Արձ.Ս.Մակարյան
հեռ.0322-4-32-99